

ԴԱՐԵՐՈՒ ՃԱՄԲԷՆ

Փափարելով գրականապէս յաւերժանել Ս. Աթոռոյ տպարանի առաջին հարկւրամեակի յիշատակը՝ վանական վարչութեան որոշմամբ եւ կարգադրութեամբ ի մօտոյ կը ձեռնարկուի տպագրութեանը այն հատորին, որուն մէջ պիտի դասաւորուին մեր Ձեռագրաց Մատենադարանի բոլոր գրչագիրներու յիշատակարանները, որոնք ամբողջովին հաւաքուած են արդէն։ — Այդ հաւաքումէն, իբր նմոյշ կամ Շաշակ, «Սիոն»-ի այս թիւին մէջ, ստորեւ կը ղնենք Ժ. Դարէն սկսեալ մէն մի Դարէ մէջմէկ յիշատակարան։

Ժ. ԴԱՐ

ԱԻԵՏԱՐԱՆ ԵՐԿԱՍԳԻՐ ՄԱԳԱՂԱԹԵԱՅ

(Թ. ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ՈՅԲ = 954)

Թիւ Զեռագրի, 3273

Շնորհօք Սուրբ Հոգւոյն Սուրբ Աւետարանիչքն Մաթիոս, Մարկոս, Դուկաս, Յովհաննէս լծակցեալ արարող խաչին խըլեցին զփուշ մեղաց եւ տնկեցին զխորհուրդ տնաւրէնութեան Որդւոյն Աստուծոյ. յառաջ՝ զիջումն բանին Աստուծոյ առ սուրբ Կոյսն եւ զիննամեայ ժամանակաւ զծնունդն եւ զկաթնասուն լինելն որպէս մարդ, եւ զայլ զանբաւելի զբանն, եւ ապա զերեսնամեայ զմկրտութիւնն, եւ զնշանն զոր առնէր մի ըստ միոջէ, զկուրաց տեսանելն զխլից լսելն, եւ զհամբը խաւսելն եւ լսելն, եւ զկաղաց գնալն, եւ զդիւահարաց բժըլկելն . . . եւ զհամբարձումն առ Հայր, եւ զիջումն Հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոցն յաւուր Պենդեկոստէին եւ զայլ նշանն եւ զսքանչելիսն, զոր ոչ կարեմք ի թիւ արկանել.

Արդ եւ ծառայս Աստուծոյ Յովհաննէս սկսայ զսուրբ աւետարանս եւ կատարեցի ի ՈՅԲ թուականիս, ի կաթողիկոսութեան տէր Անանիայի եւ յառաջնորդութեան տէր Մխիթարայ երկրիս Խաղտեաց ի փոքր մենաստանիս որ կոչի Աննոցի վանք, ի դուռն սուրբ Յովհաննիսի, ձեռնադրողին Փրկչին մերոյ, Յայսմ ամի սով եղեալ ի վերայ երկրի։ Ոմն զնեալ զհացն եւ սովամահ լեալ եւ ոմն ծախեալ եւ յղրացեալ իբրեւ կարուտ ոսկոյ եւ արծաթոյ, ի նոյն յայսմ ամի կատարեցաւ բան . . . եկեալ սոլտանն արեմտից եւ տիրեալ Թէոդոպաւղսեայ եւ մարտ եղեալ ընդ վրացւոցն, յաղթել ի նմանէ թողեալ զձիս եւ զջորիս եւ զգանձս բազումս եւ ինքն փոխստա-

կան զնացել յաւրջաւառն։ Ով սուրբ եղբարք աղաւթս արարէք որ ոչ ածէ Աստուած այնպիսի աւր ի վերայ երկրի զոր տեսաք աչաւք մերովք։ Այդ եւ Յովհաննէս Բահանայ ստացայ զսուրբ կտակս զայս զաւակ ի Սիոն եւ ընտանի ի վերին երուսաղէմ։ Յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց կ'եղբարն իմոյ Ներսիսի ընտրեալ քահանայի եւ կրօնաւորի եւ հանգան իմոյ Գուրկանն եւ Վարդեթփին, եւ զստացող սուրբ կտակիս եւ զծնողսն իւր եւ զեղբարսն իւր զամենայն սիրելիս զոր եւ ինքն կամի եւ զքեռին իմ զԱստուածատուր որ անուցիւ իմ էր եւ վարդապետ, եւ որ զմեզ յիշեն առաջի անհղ ատենին Բրիստոսի յորժամ բանք սպառին եւ զորք սնոտիք թագաւորեն։ Ով սուրբ եղբարք աղաչեմ զձեզ, յորժամ ընթեռնոյք զսուրբ աւետարանս կամ ընդարինակէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր յիշեալիք զմեզ եւ յիշեցողացդ եւ յիշեցիցդ ողորմեսցի Բրիստոս ամէն։

ԺԱ. ԴԱՐ

ԱԻԵՏԱՐԱՆ ՄԱԳԱՂԱԹԵԱՅ

(ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՅ ՇԺԳ = 1054)

Թ. Զ. 1924

. . . ի ՇԺԳ թուականութեանն Հայոց գրեցաւ ցանկալի եւ սուրբ աւետարանս, ի հայրապետութեան տեսան Գրիգորիսի, եւ յինքնակալութեան Տուկճի, ի վանքս կոչեցեալ Շուխր խանդաուր, ընդ հովանեաւ սուրբ Սիովնի յառաջնորդութեան Հաւր Թումասու։ Արդ աղաչեմ զամենեանս որք ընթեռնոյք եւ լուսաւորիք ի սուրբ աւետարանէս, ըզյո(յ)քնամեղ զաշխատաւորս զՍտեփանոս զգրողս եւ զծնաւդս իմ յիշատակի արժա-

նի արարէք, և Աստուած ձեզ ողորմեացի յիւրում զալստեանն ամէն, Եւ Քրիստոսի փառք յալստեանս ամէն: — Յանուն Հաւր և որդւոյ և սուրբ Հոգւոյն: Մեք եղբարք միախորհք և սիակրանք հարազատք կըրանաւորք, որոց անունք Յակոբ և Բաներեղէս և Կիպրիանոս ծանաճի, որ եմք սպասաւորք և ծառայք սուրբ Յակովբայ, որ եմք ընդ իշխանութեամբ Սամուէղի որդւոյ Թոփիլճի, մեծանուն պատկրի (պատրիկ ?) և աստուածասէր եւ բարեպաշտ տիկնոջն մայր Մանուէղի: Որ ստացաք զսուրբ զաւետարանս ի մեր յարգար վաստակոց յԱստուածածնի ընչից, ի բարեխաւսութիւն հոգեւոր . . .

Թ. Բ. Դ. Ա. Բ

ԱԵՏԱՐԱՆ ՇԻՆ ԲՈԼՈՐԳԻՐ

(Թ. Ի. ՀԱՅՈՅ ՈՒԲ = 1183)

Թ. 2. 3133

Փառք . . .

Արդ եղև գրչութիւն սորա ի թուրբրութեանս հայոց Ո. Լ. Բ. և ի վերադիտողութեանն Տեառն Գրիգորի Հայոց հեղինակի որդւոյ Վասիլ և վասն զի ի ստոյգ օրինակաց ստուգեցաւ և գրեց աւետարանս ձեռամբ իմով անարժանիս Յովսէփայ յետնոյս ի գրչաց. ի ծովահայեացս որ կոչի առեծկան կացոյցք մեծահոգի անապատի Միլիճեոյն ընդ հովանեաւ Աստուածածնին և ընդ վերակացութեամբ հաւր Ստեփանոսի. մերձ առ ստորոտով անմատոյց ամբոցին Պապիռաւնին առ սահմանաւք Տարսոն քաղաքի և ընդ իշխանութեամբ մեծազաւր և բարեպաշտ պատրոնին Ռաւրինայ: Ի վայելումն հոգեւոր որդւոյ իմոյ Ստեփանոսի քահանայի որդւոյ Գրիգորի քահանայի թոռին Ստեփանոսի քահանայի և յիշատակ հոգւոյ իւրոյ և զծնողացն իւրոց. և իմոյ անարժանիս, և ծնողաց իմոց և բնաւ զարմարմին իմոյ, և որ զարժաթս շնորհեաց յաղագս զարդուսուրբ աւետարանիս Թագուհի մայր սոբին Ստեփանոս ի յիշատակ հոգւոյ իւրոյ և նորին հաւրն Կարապետի քահանայի. Արդ աղաչեմ զամենեւեան որք ընթեռնուք և կամ ընդաւրինակէք, յիշատա-

կի արժանի արարէք զիս զբազմամեղ զըրիչս և զամենայն վերասացեալքս ի սմա զի թերեւ ողորմութիւն գտցուք աղաւթիւք ձերովք. յահագին աւուրն, և Աստուած ձեզ ողորմեացի. ամէն: Իսկ յառաջագոյն ասացեալ վիշապքն երկուք էջ սուլթանն Խլիճ-Ասլան և առ զմայրաքաղաքն Սելահկիայ և զաւրացաւ ի վերայ ամբոցացն յայնոցիկ և սինոռ հաստատեցաւ ընդ սպարապետն հայոց Ռուբեն զետն . . . ռականոյ և յետս չողաւ սիրով և ապա ի միւս այլ կողմանէ փքայր անաւրէնն և պիւղծն յորդոյն Քետայ Սաւաճըտին որ և բռնակալեաց և առ զեղիպտոս և զԴամասկոս և զեղեւեայ որ այժմ կոչի Ուռհայ և զեմիթ և չողաւ անց զգետովն Եփրատ, եկն առ ստորոտով սուրբ լերինն գողայր ընդդէմ սպարապետին հայոց Ռուբինայ և լսէր խտազոյն պատասխանիս ի նմանէ. կամէր մտանել յաշխարհըն քրիստոնէից և ոչ կարէր, վասնզի և քրիստոնէից զունգն զաւրածողով էին ընդդէմ նորա, մահ ի մտի եղև . . . առ. զաւրաւիզն ունելով զսուրբ նշանն և զամենասրբունի աստուածածնին և զամենայն սուրբս առ ի յաւգնութիւն կոչելով քրիստոնէից, այս ինչ իրազործեցաւ մինչև ցայս վայր և առաջակայն Աստուծոյ է զիտելի:

զմանուել և զկիրակոս հոգեւոր որդիք իմ յիշեսչիք աղաւթիւք ի Տէր: Իսկ և զԴէորդ քահանայ սրբասէր և հոգեւոր եղբայր իմ աղաչեմ յիշել ի տէր զի տացէ նմա

Թ. Գ. Դ. Ա. Բ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՌՈՏ ԵՍԱՅԵԱՅ, ԴԱԻԹԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ (ՇԻՆ ՆՈՏՐ ԳԻՐ)

(Թ. Ի. 21 = 1281)

Թ. 2. 1758

Փառք փառաց փրկողին . . . Յանկ ելեալ կատարեցաւ հոգելից մատենան այս մեկնութիւն համարձակախաւս և ասորւածարան մարգարէին Եսայիայ, ի թուութեանս հնոյ, ըստ Հայոց 21, և նորոյս չըջանի, միոյ հարիւրոյ և Դէ. . . ից, ի տանս

արեւելեան, ի վիճակիս գերապանծ և բարձրապատիւ սուրբ ուխտին Հաղորատաւ, ի գաւառս զուգարացոց, ի սուրբ և ի հրաշագործ մենաստանս Մշակավանք կոչեցեալ, ի խնդրոյ երկնց երանեալ առն Աստուծոյ, աստուածադարձ բարունոյն եւ անյաղթ վարժապետին, Ներսիսի, որ է ի Տարաւն գաւառի։ Վասնզի ի ձեռն նամակի ի վերագրեալ նաճանդէն խնդրեաց զսա, և զայլս բազումս զծագրել իմոյ եղկելի անձինս, որ կոչումն Բարսեղ. և մեր ի նորին խնդրոյ զծեցաք զսա, փանօքի և անյարմար տառիւ, զոր Տէր Աստուած վաշխեալ տաղէ նմա զսա ի յաւուրսն անթիւս և յամս հազարաւորս։ Ի շահ և ի յաւգուտ իւրո անձին և նորին աշակերտելոցն։ Ի փոռս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Բայց զբեցաւ սա ի յարկնակէ մեծիմաստ և կորովարան վարդապետին Դաւթաւ, որ է հանգիստ նորա ի գերահռչակ սուրբ ուխտն Հաղորատաւ, և մականունն Քոփերեցի կոչեն, վասն ծնադաշն անտի լինելոյ և նոյն ինքն անտի ծննդեամբ, և զի ժողովեալ է սորա զբանս երկց մեկնչացն սրբոց, որպէս ցուցանէ իւրն յիշատակարան, և անուանէ զինքն քահանայ միայն, զբարձրագոյն պատին ծածկելով զվարդապետական անուն. և այն վասն յոյժ խոնարհութեան և անանպարտաւան մտացն զոր կաւեալ է սուրբն այն այր։ Բայց զի երկուցն սրբոց բանքն կրեւրի և Յովհաննէս ոչ գա ի յաւարտ գրոցս, որպէս ցուցանէ յիւրաքանչիւրսն զկայն առեալ, զոր մեք նշանագրեցաք զտեղիսն, անգիտանամք զպատճառն, և զայս զի յիշեցաք այսու պտտճառաւ, զի մի կարծիք լիցի թէ այլ ոք զծելով զսա, ոչ է գրել զերկուցն բանս զինչ և իցէ պատճառ։ Զի այս գիրք այլ ոչ է արկնակել, անդից և այսր, որ մեք զծեցաք։ Բայի նորին աշակերտէ և արեան հարադատէ Միսիթար վարդապետէ, որ նորին հրամանաւ սրբազրել է զնորին երկն աշխատութեան։ Բայց ոմանք ասեն ի նոյն սուրբ ուխտն, և այն թերեւ կարծեալք, թէ ի Դաւթայ սկզբնաւորել և ոչ ժամանել ի յաւարտն, փոխի մահուամբ ի սրբոցն կայանս, և աւանդէ զթերին ի լրութենէ, վերագրել աշակերտին իւրոյ, յանձնարարել զի ի յաւարտ հասուցէ. և նորա միայն զեփրեմին սրբոյ բաւական հա-

մարել գրէ և զայլն ոչ ևս։ Բայց ոչ տա իրաւունս այսմ այսպէս լինել յիշատակարանդնորուն Դաւթաւ, որ ի կատարած զբրոյդ եղեալ է, ապա թէ ոչ յիշատակարանդ ոչ է գրած նորուն Դաւթաւ, այլ Միսիթարաւ. և վասն երկիւղածութեան իւրոյ անձինն, վարդապետին տա զիւր աշխատութիւն, ի նորայն խառնելով և ի նորա յանուն և զյիշատակարանն գրէ։ Արդ եթէ այդպէս է և թէ այսպէս, անգիտելի է. բայց յիշատակ նոցա աւրհնութեամբ. և աղաւթք նոցա ի վերա ամենայն քրիստոնէից. ամէն։ — Արդ աղաչեմք զամենեւեան ճաշակողացոյ յայսմ սեղանոյ յոքնարեն և անորժահամ հանդերձելոյ, յիշեալիք ի Տէր նախ գերանեալն այն և զցանկալին հրեշտակաց զպեան բարունեաց ըզնեքսէս ստացող գրոցս. ընդ նմին և զարքեպիսկոպոսն զսէր Յովհաննէս զաթոռակալն գերահռչակ սուրբ ուխտին Հաղորատայ, որ զաւրինակս շնորհեաց. ընդ նմին ևս զՅովհաննէս բարունի աշակերտ նորուն Ներսէսի, որ առ մեզս է և զնաց ի մէնջ, և երեք զաւրինակս առ մեզ աւուր միոյ ճանապարհ. բարձեալ ի վերայ թիկանց ողինն իւրոյ։ Ընդ նմին և զհամաւրէն բնակիչք սուրբ ուխտիս Մշակավանից որք են հանգիստ և հոգաբարձու եղկելի անձին իմոյ։ որ իրր զպագան կատարի արգելեալ կամ ի խցի աստ. մերձ ի սուրբ ուխտս. ևս առուել յիշեալիք ի նոյն եղբարցս գերկուսն զայն, զմաշատուր և զԱւետիսն, որ են ըստ հոգւոյ հարադատք, միաշաւիղք և զուգակցորդք, հաւասարք և համապատիւք, որ ըստ իւրեանց ծնադագութ բարուցն և սիրայիղձ կամացն այնքան հոգացան առ մեզ զգործ սիրոյն, որ անցանէ զանցանէ զընութիւն ամենայն համացեղիցս հոգածնելոցս, և միայն աստուածազգեստից անձանց համեմատի սոցայն գութ և սէր։ զի զամենայն որպիսութիւն պիտոյից մերոց, զգեատուց և զկերակրոց լի և պատարուն հոգալին զմեր, և այն ոչ աւտարաբար և կամ ի հարկէ, այլ այնքան զուարթ և ուրախ կամաւք որ այնպէս համարէին թէ ի յառնուել են ի մէնջ և ոչ թէ տալ։ Յիշեալիք և զնոցայն սրբանունոց պատանիսն, նախ զՍարգիս քահանայն և ապա զնուիրեալ աշակերտսն զՅակոբոս, զՄարտիրոս, զՅովհաննէս,

զՀայրապետն, զՄխիթար: — Յիշես՞իք և ի յաւարտ յիշատակիս, զՄխիթար քահանայ, որ զթուզթս կոկեաց այսու յուսով զի յիշատակեցի անուն իւր ի գիրս յայա: Ընդ նմին և զբաղմասդալ և զմեղսաներկ զիմս անձն, զկարաւոս ողորմութեանն Աստուծոյ զգծաւոյ սորա, որ կոչիմս Բարսեղ, զի գծեցի զսա յոյժ աշխատութեամբ խոււարեալ ակամբ և մթացեալ լուսով, զոր և զկերպարան ներքին մարդոյն երեւելիս ցուցանէ, և որք յիշէք զոր աստ գծել են, յիշեալ լի՞նք և դուք ի Գրիստոսէ Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն: Յիշես՞իք և զհայր վանիցս զԲարթուղիմէոս, զի այց արասցէ նմա՝ Տէր և զարձուցէ ի Հար բնութենէ իւրմէ աստ. և ի հանգերձեալն քաղցր դատաստան արասցէ նմա, թողլով նմա զոր մեղ յանցանէ. ամէն:

Այլ դու, ով աստուածաբեալ և հոգիանորոգ սուրբոյ Աստուծոյ, ընկալ ի քոյոյ նուաստողի ծառայէ զսակաւ տարազս աշխատանաց և վայելեալ բերկրալիւր սրտիւ ի համադամս զորա: Թողութիւն չնորհելով խոշորութեան զրիդ, և սղալանաց բանի թէ հանգիպիս ծնողարար ուղեա, ըստ քում քաղցր բարուցդ: Բայց զփոխարէն մերոյ աշխատանացդ աղաչեմ ի ձեռն յորդհոսան արտասուացդ և ընդունական աղաւթիցդ ի հանգերձեալն ինձ ջահաւորեա. զի ի ձեռն աղաւթից ձերոց զըտայց ողորմութիւն բազմադիմի յանցանաց իմոց ի Գրիստոսէ Աստուծոյ աւրհնելոյն, յաւիտեանս ամէն. և անոր քան զյաւիտեանս. ամէն:

Նաև ընդ վերահամբաւեալդ առն յիշես՞իք զհետեւողն սորին, զտհաս և զպարզամիտ պատանի Նսայի զի Աստուած տացէ նմա արթուն հոգի:

Սկզբնեղազունին ամենայն սկսմանց, անսկզբանն Աստուծոյ հաւր և որ ի նրմանէ է անժամանակաբար ծնեալն որդւոյ հանգունակի Նորին ամենայնիւ, ելողին ի հաւրէ սրբոյ հոգւոյն համազոյգ երրորդութեանն ամենայն փառք, պաշտաւն և երկրպագութիւն ամենեցունց և ի յերջանիկ ծառայէ Աստուծոյ Ներսիսէ, և ի նորին զաւակէ Բարսէղ, ամենայն յաւիտեանս և յանկէտն յաւիտեան, ամէն:

Ս. Պ. Պ. Ա. Ր

ՃԱՌԸՆՏԻՐ ՀԻՆ ԲՈԼՈՐԳԻՐ

(Թ. ԼԱՅՈՑ 22 = 1331)

Թ. 2. 282

Փառք . . .

Գրեցաւ աստուածապատում և լուսազարդ մատեանս որ կոչի ճառընտիր. ի թուականութեանս հայոց 22: և ի թագաւորութեանս հայոց Լեւոնի որդւոյ Աւինի և ի հայրապետութեանս Տէր . . . և ի յաթոռակալութեանս Երուսաղէմի Տէր Վարդանայ արեւելցոյ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ ի զուռն հրեշտակապետաց Միքայելի Գարիէլի և Ռափայելի. ձեռամբ անարհեստ գրչի Ներսիսի Կրակցոյ, և աւանդեցի յերուսաղէմս սուրբ Յակոբայ եկեղեցոյ զճառընտիրս որ ունի յինքեան զպատմութիւն Տէրունական տօնից և մարգարէից և առաքելոց և հայրապետաց և ճգնաւորաց և վկայից Գրիստոսի Աստուծոյ մերոյ. Արդ աղաչեմ զամենեւեան սիրովն Գրիստոսի որ հանդիպիք լուսազարդ տառիս և վայելէք յուրախարար բարիս. յիշել ի մեղաց թողութիւն զաշխատող տառիս և զքեռին իմ զՅովհաննէս միակեց և զԺնաւոյն իմ զԱւտարչաւ և Շնոհֆոր. և զքոյրն իմ զԱլիք զփոխեալն առ Գրիստոս և զայլ քեռիքն իմ զՅովհաննէս Սաւաւն և զտէրպապն և զկուսակրաւն արեղայն զկոստանդին, և զՍտեփանոս խաղանն և զայլ արեան մերձաւորքն իմ: Եւ զրեցի ազատաբարոյ կամաւք և ոչ վարձու և աւանդեցի սուրբ Յակոբայ եկեղեցւոյն, զի կացցէ առաջի սրբոյ Յակոբայ: Ի յիշատակ ինձ և ծնաւոյց իմոց և ամենայն երախտաւորաց: Դարձեալ աղաչեմ յիշեցէք զՏէր Վարդան զառաջնորդ սուրբ Յակոբայ որ յորդորեց զմեզ ի գրել տառիս. և զՄաթէոս կուսակրաւն արեղայն որ զգիրքս կապեց. և զՅովհաննէս Դուճեցի որ զգիրքս ծաղկեց, և զայլ կուսակրաւն արեղայնս հոգեւոր հարքս իմ և զեղբարքս իմ որ վասն սիրոյն Գրիստոսի կու պանդխտին ի զուռն հրեշտակապետաց և զճնաւորեաց միակեցունքս, և զհոգեւոր հաւատովորքս և զայլ բնակիչքս սուրբ Յակոբայ և սուրբ

հրեշտակապետաց, դառաջինսն և զմիջինսն և զվերջինսն:

Աղերսարկու մաղթանաւք կողկողիմ պաղատանաւք յերես անկեալ ազալեմ չլինել մեղադիր սխալանաց և անյարմարութեան գրչութեանս զի կար մեր այս էր. նա և տեղիս յորում պանդխտիմ բազմադիմի ունեկով զվիշտս զաղմուկս զի և ոչ քթել մի ական խաղաղի յաղմկէ և այլ որ քանի ի գրել սկսայ նա էտո գող և տաքութիւն և այլ բռնեցին թէ փախած ծառայ ես սուլտանայ, և հազար ճորով խալըսեցայ:

Արդ ես ողորմելի գերիս և մեղաւք խաւարեալս ներսէս կրակցիս գրեցի իմով աշխատութեամբ և յաւժար կամաւք զսուրբ մատենան և աւանդեցի սուրբ Յակոբայ զի միշտ յիշեցեն զմերս անորժանութիւն և զծնաւզսն մեր և զքեռիքն իմ եւ զայլ տրեան մերձաւորքն իմ: Արդ մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ Յակոբայ, ոչ եպիսկոպոս, ոչ հայրապետ, և ոչ այլ ոք ի հոգեւորաց և ի մարմնաւորաց. իսկ եթէ ոք յանդգնի և հանէ, աոցէ անէծս ցաւագինս և ելցէ ինքն իւրայովքն հանդերձ ի կենաց գրէն և մասն նորա ընդ կայէնի և ընդ Յուդայի և ընդ խաչհանուսն եղիցի, և կալցէ իւր դատախազ զսուրբ Յակոբ և զհրեշտակս:

Իսկ խնամով պահողքն աւհրին յԱստուծոյ ամենայն սրբոց մանաւանդ թէ խոզովութիւն և փախուստ լինի հոգ տարցեն և փախուցեն և զարձեալ ի նոյն տեղի ի սուրբ Յակոբ դարձուցեն. և վարձս մեծապէս առցեն յԱստուծոյ և ի սուրբ Յակոբայ: Ով եղբարք զպակասն զոր չկայր յեկեղեցիս զայն եմ գրել մեծ աշխատութեամբ ի մեծ տաւնականէն որ երեք իջնէր և լիզած և յայլ խառնակ գրենաց: Եւ յիշողքդ զմեզ ի բարին՝ դուք յիշեալ լիջիք յողորմութիւնն ամենայն, և Բրիտտոսի յուսոյն մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն: Ամէն: Ռ. Ամէն:

Ով եղբարք վկայ է Աստուած որ ի թղթիս զին իսկի մարդ չաւգնեց. որ արձակէի գրելու գրադարձով:

Յիշեցէք զհոգեւոր մայրն իմ զԲրիտտոսնէ հաւատաւորն և զտիկիրնն որ զգրոցս կոճկինն գնեց. և Աստուած զնա յիշէ:

ԺԵ. ԴԱՐ

ԱԿԵՏԱՐԱՆ ԲՈԼՈՐԳԻՐ

(ԹԻ. ՀԱՅՈՅ ԶԺԷ = 1468)

Թ. 2. 3427

Փա՛ռք . . . Եւ արդ տեսեալ զսորս անճառելի ուշադրէն և զահագին սպառնալիքն և զամենեցուն փրկագործութեան խորհուրդ աստուածապէր և հաւատարիմ ծառայքն Աստուծոյ ամիր Սարգիսն և Հայխաթունն՝ և ստացաւ զանառիկ մեծութիւնս և զփարթամ հարստութիւնս զմարդարտալար սուրբ աւետարանս զուսատուս հոգւոց. և զքաւիչս մեղաւորաց յիշատակ հոգոյ իւրոյ և բարեպաշտ ծնաւդաց իւրեանց հարցն Յովանիսին և Ստեփանոսին և մաւրն նոցա Շամշախաթունին զաղամղութլուն և ամենայն տրեան մերձաւորացն: Վասն որոյ որք վաշկէք և տեսանէք զտէրունեան սուրբ աւետարանս, ուղիղ սրտիւ և լի բերանիւ Աստուած ողորմի ասացէք ստացաւ ի սուրբ աւետարանիս իմաստուն և պատուական ծառային Աստուծոյ Հայխաթունին և իւր պարճանաց եղբարցն քաջ և արի բարունոյն ներսէս վարդապետին և տէր Ռստակէս իմաստուն և բանիրուն կրօնւրին: Այլ և հանգուցեալ եղբարցն Ատոմին և Վրթանիսին և իւր բարի զաւակացն Խալիֆին և Բէկուէն և մօրն Եղիսարէթին: Եւ արդ ես յեանեալս ի կարգաւորաց և անորժանս ի քահանայից և անիմաստս ի գրչաց Յովանէ աշխարհի երէց: Ոչ ունեկով իշխանութիւն հպիլ ի սուրբ աւետարանս այլ յուսալով ի ներողութիւն Աստուծոյ ահիւ և երկիւղիւ սկսայ զսուրբ աւետարանս և բազում զգուշութեամբ աւարտեցի կամուէն Աստուծոյ և աւգնականութեամբ հոգոյն սրբոյ, յորում է մեծ թուականն հայոց ԶԺԷ: Եւ է թագաւոր աշխարհիս ուզուն Հասանն որ Ալթան զՋհանշա փաթշահն և յայսաւուրքս փախոյց զՀասանալին: Եւ կոտորեաց զՋաղաթէն՝ և սպան զսուլթան Բուսայիտն: Եւ տրեաց աշխարհիս՝ ի Շամա դռնէն մինչեւ ի Խորասան արար ընդ իւրում իշխանութեան: Եւ է կաթուղիկոս ի սուրբ էջմիածինն տէր Ռստակէս քաջ և արի հովին հայոց: Յայս ամի աւարտեալ

ցաւ սուրբ աւետարանս յիշատակ ամիր Սարգսին եւ կողակցին Հայսաթունին եւ կղերացն Դանարէկին եւ Շաքարբէկին եւ ամենայն արեան մերձաւորացն: Վասն որոյ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեցի ամէն: Այլ եւ անարժան գրիչս զիմ երեսս ձեզ ի գետին գնելով աղաչեմ Աստուած ողորմի ասել ինձ եւ ուսուցչին իմոյ աշխարհալոյս վարդապետին Թումայի: Եւ ծնաւդաց իմոց Մանգասարին եւ Փաշամէլէքին եւ կենակցին իմոյ գնացելոյն առ Աստուած Շուքրանին: Եւ ամենայն երախտաւորաց իմոց եւ Քրիստոս Աստուած որ առատն է ի տուրս բարեաց ձեզ տացէ զիւր առատ ողորմութիւն ամէն:

Գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ տէրունեան աւետարանս յերկիրս Քաջբերունի յԱրճէս քաղաքի ի դուռն սուրբ տաճարիս Կէորգայ զաւրավարիս ի փառս Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Գրեցաւ սուրբ աւետարանս յիշատակ բարի տանուտորջն ամիր Սարգսին եւ բարի ամուսնոյն Հայսաթունին: Եւ տուաւ ի ձեռն տէր Արիստակէս կրօնաւորին եւ աստուածաբան վարդապետին Ներսիսի: Երոց Տէր Աստուած վայելիւ տացէ մինչեւ ի խորին ծերութիւն:

Ժ. Գ. Ա. Բ

ՍԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՅՆ ՊԱՒԼՈՍԻ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ ՅԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՅԹՈՅՆ

(ԹԻ. ՀԱՅՈՑ ՌԵԷ = 1598)

Թ. 2. 260

Փառք ամենակալ ամենակարող ամենաորարի անբաժանելի սուրբ երրորդութեան որ հասոյց զիս ի գիծս վերջի: Եղիցի ինքն ահեալ յամենայնիւ . . .

Արդ ես ամենանուաւոս եւ տառապեալս Արիստակէս, յետինս յորդիս նոր Սիոնի, եւ առաջինս յանարգաց, փանաքի ըստ մարմնոյ, եւ անարի ըստ հոգոյ: Ի դաւառէ Տարօնոյ որ մականուամբ Մուշ կոչի ի գեղջէ որ կոչի Քարծոր, եւ իմ եկեալ պանդխտեցա ի մայրաքաղաքն յԱւրհայ առ ռոս տէր Սրապիոն քաջ ռաբունապետին, եւ ցանկացող զոլով իմ ի մանկու-

թենէ սպասաւորութեան աստուածային բանի հետեւեցայ նմին, վասն որոյ եւ փափաքեալ իմ աստուածախօս վարդապետութեան սուրբ առաքելոյն Պողոսի, բացայայտեալ սրբոց հարցն ոսկերերանի եւ Եփրեմի զոր եւ յետոյ այլք ի սրբոց վարդապետաց համառօտեալ յԱնանիայ վարդապետէ սանահնին. որ էր ի ժամանակս կաթողիկոսութեան տեառն Պետրոսի, յաւուրս Դիւսկորոսի, առ ի պէտս սպասաւորաց բանի: Եւ ես ձեռնարկեցի զրել զսա իմով անարհեստ եւ խոշոր զծիւ, ստացա զսա բուրաստան ամենալի եւ զանձ անկողոպտելի յիշատակ հոգւոյ իմոյ եւ մխիթարիչ մարմնոյ, սփոփիչ տրտմութեան եւ փարատիչ ձանձրութեան: Ով հայր զթութեանց եւ Աստուած մխիթարութեանց . . .

. . . Եւ ինձ հիքոյս Արիստակէս գրչիս տուք վարձս բարեաց. դարտասուս զոգրս հառաչանաց զաղաւթս պաղատանաց, ըզթողութիւն մեղաց յանցանաց հայցելով ինձ եղկելոյս յարարչէն ամենեցուն: Եւ արդ աղաչեմ զամենեւեան առհասարակ որք ազգութիւնս մամնէ եւ կամ ուրինակէք, եւ որք յետ մեր ժառանգէք զսա, նախ չմեղադրէք խոշորութեան զրոյս եւ սխալմուն, զի թէպէտ եւ բազում ջանիւ աշխատեցա սակս ստուգութեան եւ զաւրութեան, սակայն չարասէրն սատանա զանազան անկողով փորձանս ի վերայ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ ոչ տայր ըստ կամաց կատարել զգործն. վասն որոյ արտաքս թողեալ զմեզ մեղադրանաց՝ անմոռաց յիշեմք ի Քրիստոս Յիսուս զաշխատեալս զԱրիստակէս պատժապարտս, եւ զճնօղս իմ փոխեալ առ Քրիստոս զԼազարն եւ զՆարկիզն եւ զհարազատ եղբայրք իմ զՄարգար քահանայն եւ զՎարդան եւ զԵղիազարն եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ եւ Աստուած ողորմի ասացէք, եւ որք զմեզ զթաճաբար յիշեն ի Քրիստոս յիշեսցէ զնոսա Քրիստոս Աստուած մեր յերկնից արքայութեան ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոսս զուսուցանող վարդապետն իմ զտէր Սրապիոն քաջ ռաբունապետն որ ի յայս նեղ եւ ի նուրբ ժամանակին փայլէ իբրեւ զարեգակըն ի մէջ բանաւոր հօտին Քրիստոսի առ ի յուսուցանել եւ ի խրատել եւ յորդորել զհաւատացեալսն ըստ այնմ թէ հանէ ի գանձէ իւրմէ զհին եւ զնոր, որպէս ի հը-

նույն մարդարէք ի մէջ Խորայիլի, այսպէս
և սա ի մէջ հաւատացելոց: Այլ և զձեռն
իւր և զհարազատ եղբարքն և զհօրեղ-
բայն իւր որ ի յայսմ ամի փոխեցաւ առ
Քրիստոս, բազում սուգ և տրտմութիւն
եթող մեզ և իւրոցն որ իւրեւ զհայրական
և զմայրական զութ ունէին ի վերայ մեր
և ի վերայ ամենայն կարօտելոցն, թուի
թէ սոքա իւրեւ Այծեմնիկն զոր յիշէ Ղու-
կաս ի զործս Առաքելոց և որք զսոքայ
զթածարար յիշեն ի Քրիստոս, յիշեսցէ
զնոսա Քրիստոս Աստուած մեր յիւրում
երկնից արքայութեան:

Արդ զրեցաւ Աստուածախօս մեկնու-
թիւն Պօղոսի առաքելոյն ի թուին հայոց
Ռեմէ ի մայրաքաղաքն յեփեսոս ի զուռն
բարձրահայեաց սուրբ Աստուածածնին, ի
յառաջնորդութեան քաղաքիս տէր Սրա-
պիոն քաջ ռարունապետին, և յաթոռա-
կալութեան սրբոյն Դրիգորի մեր Լուսաւոր-
չին՝ տէր Դաւիթ կաթողիկոսի և տանն
Սրսա տէր Աղարիա կաթողիկոսի և ի բո-
նակալութեան տաճկաց սուլթան Մահմեդին
որոյ սուլթան Մուրատին, և թագաւորու-
թեան պարսից Շահապսպսին, եղև զրաւ
և կատարումն զրոցս ձեռամբ անարհեստ
զրչիս Արիստակէսի: Դարձեալ ի յայսմ
ամի ել թագաւորն տաճկաց սուլթան Մահ-
մէտ ի կոստանդնուպոլսէ բազում և ծանր
զօրօք գնալ ի վերայ ազգին Մաճարաց տալ
պատերազմ ընդ նմա, և ոչ կարաց զղէմս
ունել ալ փախեալ յերեսաց նորա և եկն
ամաւթով հմուտ ի քաղաքն Խստամբօլ և
արար խաղաղութիւն սակաւ մի և ոչ յո-
լով: Ի թվին Ռեմէ դարձեալ ել հրաման
ի թագաւորէն տաճկաց սուլթան Մահմե-
տէն, որ ծագեաց Աստուած ի միտս նորա
որպէս ի հնումն առ Դարեհիւ ազգին Իս-
րայիլի, այսպէս և սա արար ազգին քը-
րիստոնէից, որ վերացոյց զգտակն, զոր ե-
ղեալ էր հայր սորա սուլթան Մուրատ առ
ի նախատիս քրիստոնէից ի թուին Ռեմ-
ԺՉ ամ այնպէս կացին ի կնդութիւն,
յետ այնորիկ առաքեաց սա զեպան մի
հրովարտակաւ ի քաղաքն Տիգրանակերտ
որ մականուամբ Ամիթ կոչի, առ ի վերա-
ցուցանել զգտակն և հաստատել զփակեղն
այսինքն զգաւտին և եկեալ զեպանն ի
քաղաք և ժողովեաց զնոսա և հմուտ առ
Բ. Դուռն և յանմիարանութենէ քրիս-

տոնէից ոչ եղև փակեղն հաստատեալ:

Դարձեալ եկն յՈւրհայ և ժողովեաց
զքրիստոնէայքն և հմուտ առ Բ. Դուռն
և կարգացին զհրաման թագաւորին և
ի հանդէս և ի լսելիս ամենեցուն, ոմանք
ի տաճկացն հաճեցան և հաւանեցան բանիւ,
և ոմանք զժկամակ եղին և զչարէին և ոչ
կամէին զփակեղն, այլ քրիստոնէայք ոս-
կով և արծաթով կուրացուցին զաչս նոցա
ըստ այնմ թէ զարծաթ կուրացուցէ զա-
չըս համարձակախօսից, յայնժամ հրաման
արար տեղապահ քաղաքին պօստանջի Ալի
փաշայն և զատաւորն որ Քրիստոնէայքն
փակեղ զրին. այս եղև ի թուին Ռեմէ
յԱպրիլ ամիս ԻԱ ի ժամանակին Տէր Սրա-
պիոն վարդապետին ընդ որս էր պատրի-
արզն սուրբ Երուսաղէմայ տէր Դաւիթ
արք եպիսկոպոս որ փախեալ էր ի հար-
կապահանջութենէ անօրինացն և եկեալ ի
քաղաքն յՈւրհայ, որ և վարդապետն սի-
րով ընկալաւ զնայ և ի միասին ուրախա-
նային, և տուաւ փառքն քաղաքացոց և
եղև ուրախութիւն մեծ յոյժ քրիստոնէից,
իսկ այլ այլազգեաց չար զինուորքն ելին
զկնի հրամանի թագաւորին զգտակն խը-
լէին և առնէին ի գլխոյ նոցա որ մինչև
ի մի ժամն անյայտ գտակն որ ոչ էր և էր,
թէ զով ոք տեսանէին գտակով ըմբռնէին
տանէին առ զուռն և առ բանտն քա-
ղաքին: Եւ վերացաւ գտակն յՈւրհայ քա-
ղաքէն:

Դարձեալ մինչ ի յայս ուրախութիւն
էին քրիստոնէայք, ահա յանկարծակի հըն-
չեաց հողմ չարութեան սատանայի որ ե-
լից խռովութեամբ և չարութեամբ զսիրտ
բռնաւորի միում որուն անունն է Մահ-
մուտ փաշա որ եկն ի քաղաքն յՈւրհայ
և դարձեալ ել ի վերայ երկրին Սրճոյ բա-
զում զօրօք և պատերազմեցաւ ընդ պա-
րոնի միոյ որոյ անունն էր Մախսուտ բէկ,
և զղէմ ոչ կարաց ունել, փախեալ ի նը-
մանէ Մախսուտ պէկն, և նա դարձաւ
անողորմարար սուր եղեալ ի վերայ Սրճոյ
երկրին զոմանս կոտորեաց և զոմանս
գերի վարեաց և էառ ուար զերկրին, որ
և ասեն թէ Ծ Ռ գլխի ոչխար երեւ թող
զծի և զծորի և զանասուն և զարձաւ ի
քաղաքն յՈւրհայ: Իսկ նա ոչ բաւակա-
նայաւ, այլ խորհեցաւ չար ի վերայ
քաղաքին, որպէս ի հնումն Յուսիանոս

յուսուրն քառասորդաց, այսպէս եւ արար սա տաճկաց եւ քրիստոնէից եւ ոյլ պատճառ ոչ կարոց զտանել ի վերայ քրիստոնէից միայն զփակեղն, այլ զայս տաճր թէ ոչ է հրաման թագաւորին, այլ ապրատման հէք ի նմանէ, վասն որոյ հրաման արար վերացուցել զգօտին, զոր եւ արարին իսկ, եւ այս եղև ի սեպտեմբր ամիս ի թուին յաւուր ուրբաթու սուրբ խաչի պահոց ք. աւուր զլիսի բաց կացի քրիստոնեայն, եւ ապա հետ ք. աւուրն դարձեալ հրաման արար որ փակել զրին եւ ընկեց ի վերայ քրիստոնէիցն պ. զլուս ոչխար եւ ճշդիւ պահանջէր ի նոցանէ ըզգինն կրկնապատիկ եւ զնկողութիւն եւ ըզհարչարանք քրիստոնէից ոչ կարեմ գրով արգանել զոր ունին այժմ: Բայց ընդ այս ուրախ եմք զի ի վիճակն Գրիստոսի եմք:

Թ. Ե. Գ. Ա. Բ
ՈՍԿԵՓՈՐԻԿ ԲՈԼՈՐԳԻՐ
 (Թ. Ի. ՀԱՅՈՅ ՌՁԳ = 1634)
 Թ. Զ. 11

Փառք քեզ Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, եռաչափ եւ զուգակշիռ հարթ եւ հաւասար, համապատկ սուրբ եւ համադոյ ներորդութիւն . . . որ անբաւազուի շնորհօք ողորմութեան քո ետուր զօրութիւն յամենայնի տկար եւ սարտուցեալ մեղսամած եւ եղկելի ափար աճին եւ փրժուն գրչի, Գրիգոր Երիցուս, անյիշելի եւ անպիտան քո ծառայի . . .

Տէր Աստուած, գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, ողորմեա եւ արձակեաց ի կապից մեղաց զստացողք սորա զՏէր Կարապետ հեղահոգի եւ սրբամիտ արեղայ եւ զծնողսն իւր զԲարհրդարն եւ զԴաստագուին եւ զննջեցեալսն. ամէն. . . Եւ արդ յայսքան եւ յայսպիսի մեծ եւ բարեղարգ եւ պատուական սրբոց զումարս, որ կոչի Ոսկիփոր, բարեխօս աշխարհի եւ ապաւէն ապաստանի զոր զիմեալ մեծաւ յուսով, բարի արմատն եւ հաւատարիմ կրօնաւորն Կարապետն կոչեցեալ եւ փափաքեաց կենացն յաւիտեականին, եւ աւետեացն զոր խոստացաւ Տէր սիրեղեաց իւրոց, եւ մա-

տուցեալ զունկն աւետարանական բանին որ ասէ. Արարէք ձեզ քսակ առանց հնանալոյ զանձ անպակաս յերկինս եւ ցանկացող եղևալ տառուածային զանձիս. եւ ստացաւ զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ իւրոցն հօրն Բարհրդարին եւ մօրն Դաստագուին եւ եղբարցն Աստուածաւորին եւ Շայր ամիրին եւ որդոցն Միրզին Մուրատ Բաղչին եւ Տէր Սիմէոնին:

Դարձեալ կրկին մաղթանօք աղաչեմ զձեզ, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղոթս ձեր զստացող սուրբ գրոցս զՏէր Կարապետն եւ զծնողսն իւր եւ զամենայն մերձաւորս իւր զկենդանիսն եւ զհանգուցեալսն. եւ լի բերանով եւ բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցա հոգւոյն, եւ զուր փարձս յԱստուծոյ անուրք. ամէն:

Եւ արդ՝ ես յետեալս յամենայն մասանց բարեացն, եւ յանարժանս յուխտէ եկեղեցւոյ Գրիգոր անուն միայն քահանայ, եւ ոչ գարծօք որ եմ բազում ցնորիւք մեղաց պաշարեալ, ողբս առից ի վերայ թշուառացեալ անձին իմոյ եւ լացից ըզբազմութիւն մեղաց իմոց. զոր ոչ կարէ նամակս վերաբերել. այլ զիտողին զգաղտըն երեւոյն առաջի արկեալ հեծեծեցից եւ խնդրեցից ի նմանէ զոր եւ տացէ մեզ մասըն ողորմութեան հայցուածովք ամենայն սրբոց իւրոց եւ աղօթիւք սուրբ եղբարցդ:

Չոր վստահացեալ եմ ի յօգնականութիւն Հոգւոյն սրբոյ, ձեռն արկեալ զրեցի զսա ի զուռն սուրբ Աստուածածնիս որ կոչի Միրանաւոր եւ այլ սրբութեանցս որ աստ կան հաւաքեալ ամէն, ի թուականիս հայոց ՌՁԳ ամին: Ի յառաջնորդութեան մեծ աթոռոյն էջմիածնի տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի. ի յառաջնորդութեան Վարազայ Մարտիրոս րարունապետի. ի հայրապետութեան տէր Յուսկայ որդւոյ, զոր Տէր Աստուած հաստատուն եւ անզրդուելի կենօք պահեսցէ զսոսա մինչեւ ի խորին ծերութիւն արժանի տունէ զսոսա. ամէն:

Եւ արդ՝ ես անարժան յերեսս զետին զնելով առաջի ձեր. եւ աղաչեմ չլինել մեղադիր սխալանաց եւ խոչորութեան գրիս եւ պակասութեան արեստիցս, եւ էր ժամանակս դառն ի ձեռաց անօրինաց որ եկն Ռըստամ խան ի վերայ Վանայ Լ. Ռ. հո-

գլուխը եւ հառուր խնար բազում ժամանակս եւ խիստ չարչարէին զտառապեալ ազգն քրիստոնէից ի պարիսպն ի խանտակ փորելն. եւ զորս ի քաղաքն զտանէին բազում չարչարանք տալին եւ վասն չար գործոց իմոց եկեալ գտին զիս եւ զականջս կտրեցին եւ խիստ վահեցայ եւ տկարութիւն շատ քաշեցի: Եւ զուրք ով սիրելիք զսղալն ուղղեցէք եւ մեր մեղաց թողութիւն հայցեցէք ի Բրիստոսէ եւ ծնողաց մերոց եւ ամենայն արեան մերձաւորացն մերոց եւ երախտաւորացն մերոց, եւ հոգեւոր վարպետացն մերոց եւ ողորմի առողացն Աստուած իւրն ողորմեսցի ամէն:

Եւ արդ ես Կարապետ արեղայ ստացայ զսուրբ զիրքս որ կոչի ռակիփոր, յիշատակ բարի հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց եւ ամենայն արեան մերձաւորացն իմոց, եւս առաւել որ ի վերայ գրոցս եւրախտիք ունին եւ եղի ի դուռն Արգելանոց սուրբ Աստուածածնին եւ Տէր Յուսկայ որդոյ սուրբ գերեզմանին, եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ զիրքս ի զբրանէ սոցա թէ մերոց եւ թէ օտարաց. եւ թէ ոք յանդգնի ծախէ կամ գրաւէ կամ հեռացուցանէ ի գրանէ Տէր Յուսկայ որդոյ սուրբ գերեզմանէն, զմասն Յուդայի առցէ եւ զանէժքն օժին եւ զպատիմն Կայէնի. ամէն:

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Տէր Կիրակոսին եւ կողակցին եւ ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորացն սորա որ միջնորդ եղեւ գրոցս եւ կամեցաւ, եւ Աստուածն ամենայնի որ առատ է ի տուրս բարեաց առ հասարակ ողորմեսցի ամէն:

Եւս առաւել միաբան սուրբ ուխտիս Արգելանայ, եւ զհայր վանաց զԱրարհամ արհ եպիսկոպոսն եւ զմեծն Տէր Սիմէոն որ յայս ամի փոխեցան առ Աստուած եւ զեղբարսն մեր զՏոգեւորն զտէր Կիրակոսն եւ զտէր Գալուստն, զտէր Յովհանէսն, եւ զայլ միաբան եղբարքն, եւ զՄիլիքն Բերկրու քաղաքին Նուրիջանն եւ զԾնողսն իւր զՄիլիք Ջանգիր եւ զՄարգարիտն, զտէր Ռաշատուրն եւ զհօր եղբարն իլիսաթն եւ զերէց փոխան Գիրիգոր որ շատ երախտիք ունին ի վերայ սուրբ Աստուածածնին եւ տէր Յուսկայ որդոյ սուրբ գերեզմանին եւս առաւել շինողաց եւ շին պահողացն եւ զբքին խնամ տանողաց եւ լաւ պահողաց, եւ Աս-

տուածն ամենայնի որ առատն է ի տուրս բարեաց, տացէ զիւր արքայութիւն, ձեզ եւ ձեր ննջեցեալոցն, ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Բրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք տէր Կարապետ կրօնաւորին եւ իւր ծնողաց հօրն Բարհաւդարին եւ մօր Դոստապուլին, եղբարն Աստուածատուրին եւ ստանահայր ամիրադին կողակցին Գուլբէկուն, որդոյն Յովանիսին զստեր Մրաթին, մեր հոգեւոր եղբօր տէր Կիրակոս կրօնաւորին, եւ ծնաւորաց նորին ստանահայր Մանոսին, Ասլանին Սարգիսին երէց փոխան Սէթիջանին, մօր Փարիսանին, քեւր Գուլիսասին եւ որք երախտիք եւ աշխատանք ունին ի վերայ սուրբ գրոցս. ով կարգայ կամ աւրինակէ նա՞ զԱստուած ողորմին ասէ, Աստուած իւրն ողորմեսցի յաւուր զատաստանին, ամէն:

ԺԸ. Դ Ա Ր

ՍԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ ԹՂԹՈՑ ՆՈՏՐԳԻՐ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

ԹԻ. ՀԱՅՈՑ ՌՃՂԴ = 1725

Թ. 2. 163

Փառք . . . : Արդ գրեցաւ աստուածային մատեանս, ի յերկիրս Կեսարիայ ի գիւղն Եւքառայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, սուրբ Կարապետի եւ սրբոյն Ստեփաննոսին նախափկայի, եւ այլ բազմահոյլ սրբոց որ աստ: Ջեռամբ մեղապարտ եւ անցաւոր անարժան Յովակիմ զպրի: Բայց զրաւ սորա եղեւ ի թվականիս հայոց ՌՃՂԴ ամին. եւ ի յամենան յունիսի ԺԵ: Արդ՝ զիրքս այս նազելի կոչի Սարգիս գիրք. որ է մեկնութիւն կաթուղիկէից եւթանց թղթոցն: Զոր գտեալ զրիմեցի Յակոբ վարդապետն զմիոյ օրինակացն զրքոյս որ ի վաղուց ժամանակաց մնացեալ էր ի սուրբ Կարապետ վանքս: Երեւ հնացեալ խակ եւ բնաւին քայքայեալ, եւ հատեալ զբազումս ի թղթոցն. զոր ուրոնեալ եղիտ ի յայլ քաղաքաց զպակասսն եւ բերեալ միացոյց ընդ հնոցն. եւ վերստին նորոգեց զհինն: Եւ կամեցաւ օրինակել տալ զայս նորոգ եւ վայելուչ ծաղկափայլ

հոգեւոր բուրաստանս որպէս եւ տեսա-
նէք իսկ: Եւ բազում ըղձափափաք եւ ջեր-
մեռանդ սիրով ետուր սկիզբն ասնել քէ-
թէճի զատէ տիրացու Պօղոսին: Եւ նա գլը-
հալ էր մինչեւ ի իւր տետրն, եւ աւարտ
եղև կենաց նորա, եւ յետ այնորիկ զմեա-
ցեալն ետուր ինձ անարժանիս նշովակիմ
զպրի զծագրել: Գոր եւ ձեռն արկի ողոր-
մութեամբն Աստուծոյ եւ օթանդակութեամբ
Հոգւոյն սրբոյ հասի յաւարտ: Արդ ա-
ղաչեմ եւ պաղատիմ հանդիպողացդ այս-
միկ աստուածայնոյ հոգելից մատենիս,
յիշեսցիք ի մայքրափայլ յաղօթս ձեր զգրի-
մեցի Յակոբ վարդապետն եւ զծնօղսն նո-
րին, ըզնաչատուրն եւ զԴրմըզն, եւ զամե-
նայն ազգայինսն նորին: Որ ստացաւ զսա
ի վայելումն անձին իւրոյ: Արդ որք հան-
դիպիք սմա Աստուած ողորմի ասացէք եւ
մեղաց թողութիւն խնդրեցէք: Նաև զիս
անարժան Յովակիմ զպիրս հանդերձ ծնօ-
ղօք իմօվք յիշատակել մի խնայէք, եւ այն
որ առատն է ի տուրս պարգեհաց ձեզ եւ
մեզ առ հասարակ ողորմեսցի իւր միս-
անգամ զալստեանն. ամէն: Հայր:

ԺԹ. ԴԱՐ

ԱԵՏԱՐԱՆ ԶԱՇՈՒ ԲՈԼՈՐԳԻՐ

(ԹԻ. ՔՐԻՍՏՈՍԻ 1863)

Թ. 2. 3236

Հաստչին համայնից միակամ իշխա-
նութեան եւ եռագիմի անձնաւորութեան
սուրբ աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ վայելչական գոհութեամբ
փառք պատիւ եւ երկրպագութիւն այժմ
եւ անգրաւ յաւիտեան մատուցանեմք:

Որ ետ կարողութիւն ինձ նուաստիւ
գրել եւ աւարտ հասուցանել մեղսամած
ձեռամբ զսուրբ զիրս զայս՝ որ կոչի ճաշու
Աւետարան: որ ընթեռնուն ի բոլոր տարին
ի ժամ սուրբ պատարագին յաւուրս տէ-
րունական տօնից եւ պահոց եւ բոլոր սրբոց
անթերի ըստ սահմանադրութեան նոր տօ-
նացուցի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ:

Որոյ եղէ ցանկացող սրբոյ աւետա-
րանիս յետինս քահանայից Ակնայ շրջա-
կայ զիւղիցն կամրակապցի հանդուցեալ

մաքրրափայլ Տէր զուկաս քահանայի որդի
նաւաստ եւ անարժան մահտեսի Տէր Բար-
դղիմէս, որ գրեցի հօգամած ձեռամբս՝ եւ
եղի յիշատակ ի զիւզս կամարակապ առ
զրան սուրբ տաճարի քաղցրահայեաց սուրբ
աստուածածնի՝ առ ի յիշատակ անջնջելի
վասն հոգւոյ ծնողաց իմոց, եւ համայն նըն-
ջեցելոց. եւ վասն արեւշատութեան կեն-
դանեաց մերոց:

Արդ աղաչեմ զգասս սրբազան քա-
հանայից եւ պաշտօնէից սուրբ եկեղեցւոյ՝
յորժամ ընթեռնուք զսա ի ժամ սուրբ
պատարագին յիշեցէք ի սուրբ աղօթս
ձեր՝ զնախնի ննջեցեալսն մեր՝ նախա-
պէս զմեծ պապն զմահտեսի Խաչատուրն,
եւ զորդի զտէր Ղուկաս քահանայն. եւ
զորդիս նորա զտէր Յոհանն վեսային եւ
զերեմիան. եւ զորդի Եսայիին՝ զտէր Յա-
րութիւն, եւ զորդիս նորա՝ զտէր Յո-
հաննէան՝ զԱթանասն՝ եւ զԹեոփորոսն, եւ
զորդիս տէր Յոհաննէայն զտէր Յարու-
թիւն, եւ զտէր Յոհաննէա զպապն իմ. եւ
զորդիս նորա զհայրն իմ զտէր Ղուկասն.
Եւ հօր եղբայր իմ զՅարութիւն. եւ զորդի
նորա կենդանի նիկողայոսն, եւ թոռն զՅա-
րութիւն, այլ եւ զորդիս տէր Յարութիւն
քահանայի զկենդանի տէր Յոհաննէան եւ
զՄարտիրոսն. եւ զթոռունսն զհանգուցեալ
Յակոբըն եւ զՅարութիւն.

Հուսկ յետոյ եւ զիս զանարժան զմեղ-
սամած գրիչսն զմահտեսի տէր Բարդղղի-
մէ քահանայս, եւ զորդի իմ զմահտեսի
Խաչատուրն՝ եւ զթոռունսն իմ զՂուկասն,
Յակոբն Դէորդն եւ Սուլթանն, եւ քուերքս,
նազլուն՝ Երանն, եւ զժուհիստանն, եւ զըս-
տերքս՝ Տալիզան՝ Իսկուհին՝ եւ զԻւզարեհին:

Նաև զննջեցեալսն զմեծ մայրն իմ
զԱճարն, զմայր իմ զԻսկուհին. զքոյր իմ
Մարիամն զկողակից իմ Սուլթանն, եւ զեղ-
բարքս Յոհաննէան, Սարգիսն, եւ Խաչա-
տուրն, զհարս կիւլիւնէն. եւ զգտերքս իմ
Զուլալն եւ զՍօղովմէն. եւ զթոռունսն իմ
զՂուկասն եւ զԴէորդն:

Այլ եւ զհոգեւոր ծնօղն իմ զտէր Երե-
միայ արքեպիսկոպոսն զպօլսեցի, եւ զնախ-
կին առաջնորդս վիճակիս Ակնայ զտէր Յա-
կոբ եւ զտէր Յոհաննէա արքեպիսկոպոսն,
եւ զտէր Պետրոս ծայրագոյն վարդապետն
ընդ որս եւ զայլ համօրէն ննջեցեալսն եւ
զկենդանիս մեր. եւ ասասցիք Աստուած

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԵՐ ԵՒ ԱՅՅՐ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԵՍԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

(Քաղուամբ Տ. Գաբրիել Սեփեյա. Յովսէփեանի Միաբանութեան անդամներէն մէկուն գրած նամակէն)

«Այս ամբողջ ամառը պարբերաբար տազանայի եւ մտահոգութեան մէջ անցուցինք, յունիսի 1-7 Վեհափառ Հայրապետը ջերմ ունէր տաքութիւնը բարձրանում էր մինչև 39,6, ապա բրտնում էր եւ հետզհետէ հանգստանում: Տեղական հիւանդանոցի անագ բժիշկ Անուշաւան Աղիզեանը, ինչպէս եւ շրջապատողները, սկզբում կարծում էին, թէ սովորական ջերմ է: Բայց հինգ օր ընդհատումից յետոյ, նորից սկսուեց նոյն երևոյթը եւ տևեց 13-20 ր յունիսի:

Այս անգամ բժիշկն արդէն մտահոգութեամբ դիտեց տաքութեան ելուէները եւ կասկած չայտնեց կրկնուող Տիմ լինելու մասին, եւ արիւն առաւ քննութեան ենթարկելու: Գերագոյն խորհրդի անդամներն անմիջապէս որոշեցին նրեանից բժիշկներ կանչել, եւ հրաւիրուեցան ուսուցչապետ Լեոն Յովհաննիսեան եւ Գրիգոր Սաղեան,

ոգորմի. զի թերեւ ջնջեցէ գրադմութիւն մեղացս սուրբ աղօթիւք ձերովք՝ եւ ոգորմութեան ցօղըն անձրեւեցէ ի մեզ՝ առ ի պարզերես բուսուցանել ի յօրն վերջին, եւ վերանալ ընդ առաջ քրիստոսի Աստուծոյ, եւ որք յիշէք յիշեցէ զձեզ Քրիստոս Աստուած ի միւսանգամ գալստեան իւրոյ:

Արդ զրու հասնալ աւարտեցաւ՝ սուրբ աւետարանս, զի յամի տեառն 1862 ին եւ Մայիսի 31 ին սկսայ գրել՝ եւ 1863 ին հոկտեմբերի 16 ին աւարտեցաւ եւ եղաւ ի դուռն սուրբ Աստուածածնի:

Աղաչեմ զամենեւեան որ հանդիպիք սուրբ աւետարանիս՝ եւ գտանէք սղալ ի սմա, մի՛ մեղադրէք զի ոչ է կամօք մեր, այլ ՚ի մոռացմանէ, վասն զի այսմ արհեստի ոչ եմ աշակերտեալ վարժապետի՝ այլ յուսացեալ ի զօրութիւն Աստուծոյ, գրեցի զսա շնորհօք Հոգւոյն սրբոյ, որում վայրկէն գոհութիւն եւ փառք ամենազօրին Աստուծոյ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

որոնք տեղական բժիշկներ Աղիզեանի եւ Չուբարի հետ նորից քննութեան ենթարկեցին հիւանդին, հաստատելով յայտնուած կարծիքի ճշգրտութիւնը: Երկու օր յետոյ՝ յունիսի 22 ին նորից եկաւ բժշկապետ Սաղեանը Յօլհ. Յովհաննիսեանի հետ, երբ արդէն մահրէարան Չուբարը քննել էր արիւն եւ հիւանդութեան մանրէները գտել այնտեղ:

Յունիսի 20 ին բժիշկ Աղիզեանի ձեռքով կատարուած ներարկումից յետոյ՝ Ն. Սրբութիւնն իրեն այնքան լաւ էր զգում. որ թւում էր, թէ աղատուած է չար հիւանդութիւնից. ուստի եւ նախապէս եղած որոշման համեմատ՝ իմ եւ Գեորգ Ժոնայցեկոսովսի ուղեկցութեամբ Երեւան գնաց Ժոնայցեկոսովսան կառավարութեանը, ընտրութեան առթիւ նորա կատարած շնորհաւորութեան եւ ցոյց տուած զիւրութիւնների համար: Ընդունելութիւնը նշանակուած էր ժողկոմխորհի զահլիճում, եւ կատարուեց ըստ ամենայնի պատշաճ ձեւերով. նախ ինքնաշարժ մեքենան տրամադրուած էր կառավարութեան կողմից, նաեւ որպէս ուղեկից մի բարձր պաշտօնեայ նշանակուած, ժողկոմխորհի շէնքի առաջ պարետը կանգնած, սպասում էր Ն. Վեհափառութեան, իսկ սանդուխների հրապարակների վերայ կանգնած էին միլիցիոներներ, որոնք եւ անցնելու ժամանակ զինուորական պատիւ էին տալիս: Սանդուխների գլխին, վերին յարկում, սպասում էր մի այլ պաշտօնեայ, որ առաջնորդեց եւ ներս հրամցուեց Ն. Սրբութեան եւ չքախմբին:

Կառավարութեան անդամները ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Տ. Գաբրէլեանին եւ նորա օգնական Երզնկեանի գլխաւորութեամբ ընդունեցին Ն. Վեհափառութեան, առաջինը ընդառաջ գալով՝ տեղ ցոյց տուեց բաղմնու իւր կողքին եւ նոյն շարքում նաեւ չքախմբին: Ն. Սրբութիւնը հակիրճ եւ պատշաճ ողջօնի խօսքեր ուղղեց նախագահին եւ շնորհակալութիւն յայտնեց, սիրալիր պատասխան տալով Տ. Գաբրէլեանից. Այսպէս նստելուց յետոյ՝ Ն. Սրբութիւնը իւր ուրախութիւնը յայտնեց մեր երկրի շինարարական եւ այլ յառաջդիմական երևոյթների եւ նորանոր ձեռնարկութիւնների մասին, որպիսին կառուչակի մեծ կոմբինատն է, յոյս յայտնելով նաեւ, թէ իւր կաթողիքոսութեան օրով հոգեւոր եւ մարմնաւոր իշխանութիւնների բարի յարաբերութիւնները պիտի շարունակուին մինչև վերջ, ինչպէս սկսուած է: Մատուցուեցաւ թէյ, համապատասխան կարկանդակներով եւ անուշեղէններով: Զրոյցի ժամանակ Ն. Սրբութիւնը խօսեց մի քանի հարցերի մասին եւ նրանց լուծումը խնդրեց. նախագահը խոստացաւ դրական կարգադրութիւն անել եւ որոշ կէտերի համար հէնց անմիջապէս յանձնարարեց ներքին Գործերի կոմիսարի պաշտօնակատարին՝ հարկաւոր տնօրինութիւններն անել անձամբ: Տեսակցութիւնն ու հիւրասիրութիւնը տեսեց մէկուկէս ժամ, որ շատ սիրալիր բնոյթ էր կրում եւ նշանակուած էր յատկապէս երեկոյեան, որպէս զի երթեկները եւ խանգարողներ չլինեն: